ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 18 դեկտեմբեր, 2024թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն) որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Բեյսլենս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Շուշան Գալստյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 01.03.2024թ. ««11009 Զեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 366-Ա և 17.12.2024թ. «Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու և դրամաշնորհի պայմանագրի նախագիծ ներկայացնելու մասին» թիվ 2478-Ա հրամանը, «Բեյսլենս» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է, ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 10,000,000 (տասը միլիոն) (ներառյալ հարկերը) ՀՀ դրամ՝ որպես կանխավճար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով, ընդ որում՝ Ընկերությանը հատկացված կանխավճարի գումարի 25 (քսանհինգ) տոկոսը սառնցվում է բանկի կողմից՝ սպասարկման պայմանների վերաբերյալ եռակողմ Համաձայնագրի համաձայն:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը պայմանագրի 5-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 մասնակցություն ցուցարերել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «Մուտք դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթի հաղթող ընկերությունների համար նախատեսված և իրականացվող աքսելերացիոն բնույթի կրթական դասընթացներին:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան և առանձնացված հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաբաժնակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե և հատուցել կողմի պատճառած վնասները՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9 Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բաշխել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձևաթուղթը

տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը՝ 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կազմակերպության հաշվեհամարին պայմանագրի 1.1 կետով ամրագրված գումարի փոխանցումից հետո գումարի 25 (քսանհինգ) տոկոսը, որը կազմում է 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, սառեցվում է «Ինովացիոն ՓԲԸ»-ի կողմից՝ համաձայն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, կազմակերպության և բանկի միջև կնքվելիք հաշվի սպասարկման պայմանների վերաբերյալ եռակողմ համաձայնագրի՝ (այսուհետ՝ Համաձայնագիր): Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

5.2 Սառեցված 25 (քսանհինգ) տոկոսը ենթակա է ապասառեցման միայն այն դեպքում, երբ նախարարությունը, պայմանագրի արդյունքն ընդունելուց հետո, այդ մասին գրավոր համաձայնություն է տալիս բանկին: Պայմանագրի արդյունքի ընդունումից հետո ապասառեցումը իրականացվում է մինչև 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրում ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարներից հետո: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900010039[illegible] ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Գոհար Գալստյան (ստորագրություն)	«Բեյսլենս» ՍՊԸ ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, 2Ը-11 «Ինեկոբանկ» Հ/Հ 2052822302131001 ՀՎՀՀ՝ 08259661 Տնօրեն՝ Շուշան Գալստյան (ստորագրություն)

Հավելված 1
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03 պայմանագիր

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
1.	Վաճառքների համար նախատեսված ցանկի կազմում	ԱՄՆ-ում գործող միջին չափի փաստաբանական գրասենյակների ցանկ կազմել	Վեճերով զբաղվող միջին չափի փաստաբանական գրասենյակների ցանկի ուսումնասիրություն և կազմում՝ հետագա թիրախավորման և վաճառքների մեկնարկի համար:	50 իրավաբանական ընկերության ցանկ բոլոր կոնտակտային տվյալներով և համապատասխան մեր առաջնային վաճառքի թիրախին: Ցանկը պետք է լինի ամբողջական և պարունակի միայն 20-300 փաստաբան ունեցող իրավաբանական ընկերությունների տվյալներ որոնք գտնվում են ԱՄՆ-ում և զբաղվում են վեճերի ներկայացչությամբ:	01.05.2025	16.05.2025	1,003,500
2.	Մրցակիցների ուսումնասիրում	Կատարել մեծ և փոքր մրցակիցների ուսումնասիրություն մրցակցային առավելություններ	Կազմել ուղղակի և անուղղակի մրցակիցների ցանկ հասկանալու համար շուկայում առկա խաղացողներին	Վերջնականացված մրցակիցների ցանկի կազմում մրցակիցների արտադրանքի կարողությունների վերլուծություն: Ցանկը պետք է ներառի թե ուղղակի թե անուղղակի մրցակիցներին և պետք է ունենա նրանց	01.05.2025	16.05.2025	1,003,500

		ՐԸ հստակեցնելու համար		պրոդուկտի մասին տեղեկատվություն համեմատականներ անցկացնելու համար:			
3.	Պրոդուկտի դիզայի UX-ի շտկում	Պրոդուկտի դիզայի շտկում ըստ հաճախորդների հետ թեստավորման արդյունքների	Պրոդուկտի դիզայի փոփոխությունների հստակեցում, որպեսզի բավարարեն հաճախորդների կողմից դրված պահանջները փորձարկումների արդյունքում:	Պրոդուկտի դիզայնի փոփոխությունների ցանկի կազմում ըստ հաճախորդների հետ թեստավորման արդյունքների: Թեստավորման արդյունքների տրամադրում 10 հաճախորդի հետ և շտկումների ցանկի կազմում:	01.05.2025	16.05.2025	1,003,500
4	Վաճառքների համար մարկետինգային նյութերի ստեղծում	Մարկետինգայի ն մատերիալի ստեղծում պրոդուկտի վաճառքներին օժանդակելո հն համար:	Ստեղծել մեկ էջանոց ապրանքի նկարագրեր և պատրաստել PDF ձևաչափի դիզայն, որը կօժանդակի վաճառքի գործընթացին:	Ստեղծել 5 տարբեր վաճառքին օժանդակող նյութ: Տեղադրել ապրանքի նկարագրությունը: Հարմարվել բրենդի գույներին ու ոճին:	01.05.2025	16.05.2025	1,003,500
5	Վաճառների սահիկաշարի կազմում	Վաճառքներ իրականացնելու տահիկաշարի կազմում	Պրոդուկտի վաճառքների համար նախատեսված մանրակրկիտ սահիկաշարի կազմում վաճառքների հանդիպումներին ներկայացման համար: Այն կներառի	Սահիկաշարի կազմում, որը կպարունակի առնվազն պրոդուկտի նկարագիր, ստեղծող արդյունքերը:	01.05.2025	16.05.2025	501,750

6	Սոցիալական էջերի վարում	Լինքդինյան էջի ակտիվ կառավարում:	Ստեղծել LinkedIn-ի գրառումների կոնտենտի կալենդար մոտակա 8 ամսվա համար CaseLens և AI/Arb էջերի համար	Լինքդինյան էջի կոնտենտ կալենդարի ներկայացում: Լինկդինյան գրառումների տրամադրում:	01.08.2025	15.08.2025	501,750
7	Իրավական կոնֆերանսի մնասնակցություն	Փարիզի Արբիտրաժային Շաբաթ Կոնֆերանսի Մանսկացություն	Փարիզի Արբիտրաժային շաբաթ Կոնֆերանսի տոմսերի, Ինքնաթիռի տոմսերի և կացության ապահովում համահիմնադիրների համար	Կոնֆերանսում ներկայության ապահովում:	01.08.2025	15.08.2025	2,975,500
8	2 նոր նախատիպի ստեղծում	Երկու փաստաթղթերի հետ աշխատելու ԱԲ Ագենտների նախատիպերի ստեղծում	Իրականացնել նախատիպի ֆունկցիոնալ գործածություն	Նախատիպը պետք է ներառի երկու ԱԲ ագենտներ որոնք սորտավորում են իրադարձությունները ըստ ժամանակագրության և հնարավորություն են տալիս հարցեր տալ և ստանալ պատասխան օժանդակ փաստաթղթերով:	01.08.2025	15.08.2025	1,003,500
9	Պրոդուկտի պահանջների (PRD) փաստաթղթի կազմում	Պրոդուկտի պահանջների փաստաթղթի վերջնականացում (PRD)	Պրոդուկտի մանրամասն նկարագրի և պահանջների կազմում որտեղ կներառվեն տեղեկություններ թե ինչպես է պրոդուկտը աշխատում ինչպես է այն	Պրոդուկտի պահանջների փաստաթղթի ներկայացում որը հանգամանորեն նկարագրում է պրոդուկտի բոլոր մանրամասնությունները.	01.08.2025	15.08.2025	1,003,500

			բավարարում հաճախորդներ պահանջները և ինչ բարելավումներ է այն բերում հաճախորդների գործընթացներում				
	Ընդամենը՝ 10,000,000 ՀՀ դրամ						

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վաչագեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039449
ՀԿՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Գևորգ Գալստյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Քեյլենս» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 20-11

«Ինեկոբանկ»
Հ/Հ 2052822302131001
ՀԿՀՀ՝ 08259661
Տնօրեն՝ Շուշան Գալստյան

(ստորագրություն)

Հավելված 2
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված Արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել ս՛վյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՏՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«Բեյսլենս» ՍՊԸ ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, 20-11 «Ինեկոբանկ» Հ/Հ 2052822302131001 ՀՎՀՀ՝ 08259661 Տնօրեն՝ Շուշան Գալստյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման												
			Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999	Դրամաշնորհային ծրագիր												10,000,000	

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Կազգեն Սարգսյան 3/3,
ՏԵՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 90001103
ՀԿՀՀ՝ 02565518
Գլխավոր բաժնետոմսերի տնօրեն Գ. Գասպարյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Քեյլենս» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 20-II

«Ինեկորանկ»
ՀՎՀՀ՝ 20528223021310
ՀԿՀՀ՝ 08259661
Տնօրեն՝ Շուշան Գալստյան

(ստորագրություն)

Հավելված 4
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03 պայմանագրի

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ՝ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«Բեյսլենս» ՍՊԸ ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, 20-11 «Ինեկոբանկ» Հ/Հ 205282230213100 1 ՀՎՀՀ՝ 08259661 Տնօրեն՝ Շուշան Գալստյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված —— հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի անվանումը՝ Քեյսլենս
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի) ՝ 01.01.2025 / 01.08.2025
Ծրագրի նկարագրություն

Փաստաբանական գրասենյակները գործի փաստերի ուսումնասիրման համար հիմնվում են հնացած և ձեռքի մեթոդների վրա: Նրանք երկար ժամեր են ծախսում հազարավոր փաստաթղթեր ուսումնասիրելու համար՝ գործընթացը դարձնելով դանդաղ և ոչ ճշգրիտ:

Փաստաբանը միջինում մեկ գործի շրջանակներում ուսումնասիրում է 100,000 փաստաթուղթ՝ փաստերը հասկանալու և գործի ելքը փոխող փաստեր գտնելու համար: Նրանք միջինում ծախսում են օրական 5 ժամ փաստերը հասկանալու վրա: Այս տաժանակիր աշխատանքը ԱՄՆ-ում կազմում է դատավարության ծախսերի շուրջ 73 տոկոսը:

Սույն խնդիրը ունեն ԱՄՆ-ում գործող միջին և մեծ փաստաբանական գրասենյակների իրավախորհրդատուները, ովքեր ձեռքով կատարում են այդ աշխատանքը հատ-հատ ստուգելով բոլոր գործին առնչվող էլեկտրոնային փաստաթղթերը (իմեյլներ, նամակագրություն, պայմանագրեր, ցուցմունքներ, և այլն) իրենց անհրաժեշտ փաստերը գտնելու և գործը կառուցելու համար:

Քեյսլենսը ավտոմատացնում է փաստերի հայտնաբերումը արհեստական բանականության (ԱԲ) միջոցով: Այն գործընթացը դարձնում է 50 տոկոսով ավելի արագ և ճշգրիտ՝ ապահովելով, որ որևէ փաստ բաց չի թողնվել:

Փաստաբանները կարող են ստանալ արհեստական բանականության միջոցով գեներացվող փաստերի ժամանակագրություն՝ իրադարձությունները հասկանալու համար: Ժամանակագրությունը տրամադրում է նաև օժանդակ փաստաթղթերը հեշտացնելով փաստերը ստուգելու աշխատանքը: Օգտագործում ենք նաև գունային կոդեր ինֆորմացիան ավելի հեշտ ընկալելի դարձնելու համար: Նրանք նաև կարող են հարցեր տալ՝ գործի փաստաթղթերի մեծ փաթեթից արագորեն ԱԲ-ի միջոցով փաստեր գտնելու համար: Որոնում կատարելիս արդյունքներում փաստաբանները կարող են տեսնել թե անմիջապես կարևոր փաստերը թե նաև քիչ կարևոր փաստերը որը դարձնում է փաստերի որոնումը ամբողջական: Հարթակը նաև պետք է տրամադրի նախկին հարցերը նայելու հնարավորություն:

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 90001103[illegible] ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Դանիելյան	«Քեյսլենս» ՍՊԸ ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, 20-41 «Ինեկոբանկ» Հ/Հ 2052822302131001 ՀՎՀՀ՝ 08259661 Տնօրեն՝ Շուշան Գալստյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «20» դեկտեմբերի, 2024թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն, ի դեմս Գործադիր տնօրեն Հայկ Ոսկանյանի, ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Բանկ, «Թեյսլենս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Շուշան Գալստյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երեքը միասին՝ Կողմեր, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր, հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնեցին.

1.2 Սահմանել, որ 2024թ դեկտեմբերի 18-ին կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-03 ծածկագրով ռամաշնորհային պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դիմաց Կատարողին տրվող կանխավճարի 25 տոկոսը՝ 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, սառեցվում է Բանկի կողմից, Կատարողի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում գործող N 2052822302131901 հաշվեհամարին:

1.3 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված ժամկետներում Պատվիրատուին ներկայացնել Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված միջոցառումների կատարման արդյունքների մասին ամփոփիչ հաշվետվություն, որի՝ Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո և վերջինիս գրավոր համաձայնությամբ, Կատարողին տրվող կանխավճարի 25 տոկոսը կարող է ապասառեցվել Բանկի կողմից:

1.4 Սույն համաձայնագրի 1.2 կետում նշված համաձայնությունը Բանկի կողմից համարվում է ստացված, եթե Պատվիրատուի կողմից այն Բանկ է ուղարկվում գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով Բանկի՝ սույն Համաձայնագրի 3-րդ կետով նշված փոստային հասցեին կամ էլեկտրոնային հասցեին, ընդ որում, էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությունը պետք է ուղարկվի սույն Համաձայնագրի 3-րդ կետում նշված Պատվիրատուի էլեկտրոնային հասցեից: Բանկը չի ստուգում և պատասխանատվություն չի կրում սույն Համաձայնագրի 1.2 կետում նշված համաձայնության իրական լինելու, դրանում նշված տեղեկությունների ճշմարտացիության կամ հավաստիության. Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված միջոցառումների կատարման արդյունքների ստուգման կամ այն ստորագրող անձի իրավասությունների շրջանակի համար, սույն կետով սահմանված ուղարկման տեխնիկական վավերապայմաններին բավարարող գրությունը համարվում է պատշաճ ստացված և Բանկի համար կատարման ենթակա համաձայնություն, որը ստանալուց հետո՝ Բանկը եռօրյա ժամկետում ապասառեցնում է համաձայնության մեջ նշված չափով գումարները:

1.4.1. Բանկի կողմից ապասառեցման վերաբերյալ համաձայնության ստացումից հետո գումարները կարող են հասանելի չդառնալ Կատարողին, եթե դրանց նկատմամբ առկա է որևէ արգելանք:

1.5 Սույնով Կատարողը պարտավորվում է Բանկին որևէ պահանջ չներկայացնել Համաձայնագրով սահմանված գումարները ապասառեցնելու մասով, գումարների ապասառեցումը կատարվում է բացառապես սույն Համաձայնագրով սահմանված կարգով՝ Պատվիրատուի գրավոր համաձայնության հիման վրա:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ պայմանագրով ստանձնած փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Համաձայնագրի և Պայմանագրի միջև հակասությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է Համաձայնագրի դրույթներին:

2.3 Համաձայնագիրը ստորագրող Կողմերը հայտարարում են, որ իրենք իրավասու են կնքել Համաձայնագիրը, ամբողջովին գիտակցում և հասկանում են Համաձայնագրով նախատեսված բոլոր կետերի իմաստն ու

նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ Համաձայնագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով՝ ի նպաստ իրենց շահերի և նպատակների:

2.4 Համաձայնագիրը կնքված է հայերենով, 3 (երեք) օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԲԱՆԿ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3 ՀՎՀՀ 02565518 Էլ. հասցե info@hti.am Գլխավոր քարտուղար Գայլիթ Գասպարյան	«Ինեկոբանկ» ՓԲԸ ք.Երևան, Թումանյան 17 ՀՎՀՀ 01308314 Էլ. հասցե inecobank@inecobank.am Գլխավոր գործադիր տնօրենի կողմից լիազորված անձ՝	«Քեյսլենս» ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ, 20-11 20528223021310 01 ՀՎՀՀ՝ 08259661 Տնօրեն՝ Շուշան Գաբրիելյան